ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

«17» նոյեմբերի 2023թ. 90-Լ

Ե Ր Ե Վ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՐՈՇԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ մասը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 28-ի N 860-Լ որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության կանոնադրության 21-րդ կետի 15-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունում Հայաստանի Հանրապետության դրոշին ներկայացվող պահանջների պահպանման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Հրամանը ծանոթացնել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրենի տեղակալներին, կենտրոնական մարմինների, Երևանի քաղաքային և մարզային վարչությունների պետերին, վերջիններիս հայեցողությամբ՝ ենթակա անձնակազմին:

ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ Ա. ԱԲԱՋՅԱՆ

Հավելված

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՐՈՇԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունում «Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» օրենքով Հայաստանի Հանրապետության դրոշին ներկայացվող պահանջների պահպանման հետ կապված հարաբերությունները:

2. Երևան քաղաքի Նալբանդյան փողոց 104 հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության (այսուհետ՝ ՀՀ ԱԱԾ) վարչական շենքի (այսուհետ՝ ՀՀ ԱԱԾ վարչական շենք), ինչպես նաև դրա տարածքից դուրս գտնվող, առանձին շենքերում տեղակակայված ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների (բացառությամբ ՀՀ ԱԱԾ այն ստորաբաժանումների, որոնց գործունեությունը քողարկված է) վարչական շենքերի վրա մշտապես բարձրացվում է Հայաստանի Հանրապետության դրոշը:

3. ՀՀ ԱԱԾ տնօրենի աշխատակազմի 3-րդ բաժնում Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության դրոշի հետ միասին պահվում է նաև Հայաստանի Հանրապետության դրոշը, որը կնքվում է զմուռսե կնիքով և հանձնվում ՀՀ ԱԱԾ տնօրենի աշխատակազմի 3-րդ բաժնի պահպանությանը:

4. ՀՀ ԱԱԾ տնօրենի, նրա տեղակալների և ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների աշխատասենյակներում, ՀՀ ԱԱԾ սահմանապահ և այլ զորքերի զորամասերում, ինչպես նաև ՀՀ ԱԱԾ ուսումնական հաստատությունների սրահներից կամ նախասրահներից մեկում «Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» օրենքով, Կառավարության որոշումներով և սույն կարգով սահմանված պահանջների պահպանմամբ տեղադրվում է Հայաստանի Հանրապետության դրոշը:

5. ՀՀ ԱԱԾ վարչական շենքի վրա բարձրացված Հայաստանի Հանրապետության դրոշին ներկայացվող պահանջների պահպանման պարտականությունը կրում է ՀՀ ԱԱԾ տնօրենի աշխատակազմը:

6. ՀՀ ԱԱԾ վարչական շենքի տարածքից դուրս տեղակայված ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների վարչական շենքերի, այդ թվում՝ զորամասերի վրա բարձրացված Հայաստանի Հանրապետության դրոշին ներկայացվող պահանջների պահպանման պարտականությունը կրում են նշված ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները:

7. Առնվազն երեք ամիսը մեկ անգամ սույն կարգի 5-րդ և 6-րդ կետերում նշված ստորաբաժանումների ղեկավարների և վերջիններիս կողմից Հայաստանի Հանրապետության դրոշին ներկայացվող պահանջների պահպանման համար պատասխանատու նշանակված անձանց կողմից կատարվում է Հայաստանի

Հանրապետության դրոշի դիտազննում: Հայաստանի Հանրապետության դրոշի դիտազննման համար վարվում է հատուկ մատյան, որտեղ գրանցվում է դիտազննման օրը, ժամը, դիտազննման ժամանակ հայտնաբերված թերությունները և դրանց վերացման ուղղությամբ ձեռնարկվող միջոցները:

8. Անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրապետության դրոշի դիտազննման նպատակով դրոշը սահմանված կարգով կարող է իջեցվել, սակայն դիտազննումն ավարտելուց հետո այն կրկին բարձրացվում է:

9. ՀՀ ԱԱԾ տնօրենի գրավոր թույլտվությունը ստանալուց հետո Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության դրոշը ՀՀ ԱԱԾ տնօրենի աշխատակազմի 3-րդ բաժնից հանելու դեպքում, դրա հետ միասին հանվում է նաև Հայաստանի Հանրապետության դրոշը, որոնք ներկայացվում են ՀՀ ԱԱԾ տնօրենի աշխատակազմի ղեկավարին և հանձնվում են դրոշակակիրներին:

10. Դրոշակակիրն, ընդունելով Հայաստանի Հանրապետության դրոշը, ՀՀ ԱԱԾ տնօրենի աշխատակազմի ղեկավարի ներկայությամբ բացում է այն, ստուգում է պաստառի, քուղերի, ծայրապնակի, ձողափայտի առկայությունն ու դրանց վիճակը, ինչից հետո աշխատակազմի ղեկավարը հատուկ մատյանում գրառում է կատարում այն մասին, թե երբ և ում է հանձնվել Հայաստանի Հանրապետության դրոշը, որի դիմաց ստորագրում են ՀՀ ԱԱԾ տնօրենի աշխատակազմի ղեկավարը և դրոշակակիրը:

11. Հայաստանի Հանրապետության դրոշը ՀՀ ԱԱԾ տնօրենի աշխատակազմի 3-րդ բաժին վերադարձնելիս ՀՀ ԱԱԾ տնօրենի աշխատակազմի ղեկավարը ստուգում է դրա վիճակը, ինչից հետո այն տեղադրվում է ՀՀ ԱԱԾ տնօրենի աշխատակազմի 3-րդ բաժնում հատկացված վայրում և կնքվում զմուռսե կնիքով, որի վերաբերյալ հատուկ մատյանում կատարվում է գրառում:

12. Ձգալիորեն վնասված կամ ժամանակի ընթացքում հնացած (գունաթափված) Հայաստանի Հանրապետության դրոշը, որի նորոգումն անհնար է, ենթակա է փոխարինման նոր դրոշով:

13. Հայաստանի Հանրապետության դրոշը փոխելու կամ նորոգելու մասին որոշում ընդունելու համար ՀՀ ԱԱԾ տնտեսական վարչության համապատասխան աշխատակցի մասնակցությամբ իրականացվում է դիտազննում, ինչի վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որում նշվում են դրոշի վրա առկա թերությունները, դրանց առաջացման հանգամանքները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության դրոշը փոխելու կամ նորոգելու մասին դիրքորոշումը: Հայաստանի Հանրապետության դրոշը փոխելու կամ նորոգելու վերաբերյալ դիրքորոշում ներկայացվելու դեպքում, ոչ ուշ քան հաջորդը օրն այդ մասին գրավոր տեղեկացվում է ՀՀ ԱԱԾ տնտեսական վարչությանը, որն էլ պարտավոր է հինգ աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան ստորաբաժանմանը հատկացնել Հայաստանի Հանրապետության նոր դրոշ: